«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայոց ցեղասպանության թանգարան,
Երևանի պետական համալսարան

Հոդվածի նպատակն է բացահայտել «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի կիրառման հնարավորություններն ու դժվարությունները: Հոդվածում նաեւ ներկայացվում են այն խնդիրները, որոնք դրսևորվել են 1990-ականներին եւ դրանից հետո, մասնավորապես Ռուանդայում եւ Հարավսլավիայում տեղի ունեցած ցեղասպանական գործողությունների հետեւանքով ստեղծված միջազգային տրիբունալների աշխատանքում՝ այդ նորմերը մեկնաբանելու եւ դրանց արդյունավետ կիրառումն ապահովելու ուղղությամբ: Բացահայտվում են այն օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները, որոնք առաջանում են կոնվենցիայում օգտագործված սահմանումների հետ կապված: Դիտարկվում են 2020թ. Արցախի հանրապետության դեմ իրականացված ադրբեջանաթուրքական ագրեսիայի ընթացքում Թուրքիայի եւ Ադրբեջանի գործողությունները՝ Կոնվենցիայի համաձայն ցեղասպանության փորձ որակելու համատեքստում:

Բանալի բառեր
Ցեղասպանություն, կոնվենցիա, միջազգային քրեական դատարան, Հոլոքոստ, Հայոց ցեղասպանություն

Նախաբան

1944թ. «Առանցքի երկրների տիրապետությունը բռնազավթված Եվրոպայում» գրքում[1] Ռաֆայել Լեմկինի առաջին անգամ կիրառած «ցեղասպանություն» եզրույթի և այն որպես հանցագործություն

[1] **Lemkin R.,** Axis Rule In Occupied Europe, Carnegie Endowment for International Peace Division of International Law, 1944, Գրքի 9-րդ գլուխը վերնագրված է “Genocide”

որակող նրա մի շարք գաղափարների հիման վրա ձևավորվեց ու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում 1948թ. դեկտեմբերի 9-ին միաձայն ընդունվեց «Ցեղասպանության հանցագործության կանխանգելման եւ դրա համար պատժի մասին» կոնվենցիան[2]: Կոնվենցիայի ընդունումից հետո այդ եզրույթը շատ արագ մտավ քաղաքական եւ առօրեա բառապաշար, սակայն անգամ գրեթե յոթ տասնամյակ անց ակնհայտ է, որ ոչ միայն առանձին հանրույթներ, այլև միջազգային հանրությունը՝ միջազգային հարաբերություններում առանցքային դերակատարություն ունեցող կազմակերպության՝ ՄԱԿ-ի գլխավորությամբ, ձախողել է մարդկության դեմ կատարվող ամենավտանգավոր հանցագործության դեմ պայքարն ու հաճախ լիարժեքորեն չի կատարում դրան առնչվող գործառույթները:[3] Հետևաբար խիստ արդիական է այն հարցը, թե ինչո՞ւ նման կարևորություն ունեցող կոնվենցիայի կիրառումը բախվում է լուրջ, հաճախ՝ անհաղթահարելի խոչընդոտների: Պատճառը նույնն է, ինչ միջազգային հարաբերություններում դժվար կարգավորվող այլ երևույթների, մասնավորապես, հակամարտությունների կարգավորման գործընթացների դեպքում է: Ինչպես հայտնի է[4], միջազգային հարաբերություններում մի շարք հարցերի կարգավորման գործընթացների հանգուցալուծումները շատ հաճախ ձգձգվում են առանձին, հատկապես՝ քաղաքական և իրավական բաղադրիչների համադրման բարդությունների պատճառով: Իսկ, քանի որ քաղաքական բաղադրիչի դրսևորումները շատ դեպքերում թելադրված են ազդեցիկ պետությունների աշխարհաքաղաքական շահերով, դրանց ազդեցությունը արտացոլվում է նաև իրավական փաստաթղթերում: Հետևաբար կարևոր է պարզել, թե այդ բաղադրիչներից յուրաքանչյուրն ինչ ազդեցություն ունի խնդիրների լուծման վրա: Այս հոդվածում կդիտարկվեն կոնվենցիայի բովանդակության վրա տարբեր

[2] Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, https://www.un.org/en/genocideprevention/genocide-convention.shtml

[3] **Levene M.,** Genocide in the Age of the Nation State: Vol. 1: The Meaning of Genocide, 2005, I. B. Tauris, p.35

[4] **Торосян Т.С., Варданян А.В.,** Концептуализация методологии сравнительного анализа успешности сецессий. *Полис. Политические исследования*. 2021. No 1.

հանգամանքների ազդեցությունները, ինչպես նաև փաստաթղթի կիրառման ժամանակ բացահայտված դժվարություններ:

Քանի որ Կոնվենցիայի ընդունման ժամանակահատվածում նմանատիպ այլ՝ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները եւ պատերազմական հանցագործությունները ուղղակիորեն կապվում էին պատերազմի ժամանակահատվածի հետ[5] /միայն 2002թ. Միջազգային քրեական դատարանի ստեղծման կապակցությամբ այս սահմանափակումը հաղթահարվեց եւ մարդկության դեմ կատարված հանցագործությունների դեպքում հանվեց պատերազմական ժամանակահատվածով պայմանավորված սահմանափակումը/, վտանգ կար, որ նույնը կարվի նաև ցեղասպանության դեպքում: Սակայն Կոնվենցիայի առաջին հոդվածը սահմանեց, որ «ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք /պայմանավորվող կողմերը/ պարտավորվում են կանխարգելել և պատժել»[6]: Դա փաստում է, որ այն կարող է իրականացվել ցանկանած իրավիճակում՝ խաղաղության, ներքին խռովության, քաղաքացիական պատերազմի, միջազգային զինված հակամարտության կամ այլ պայմաններում: Թերևս ամենաազդեցիկ նշանակությունն ունեցավ այն հանգամանքը, որ այդ շրջանում դեռևս թարմ էին տպավորությունները հրեաների նկատմամբ իրագործված բռնություններից, որոնք տեղի էին ունեցել ոչ միայն պատերազմի ընթացքում, այլ նաեւ դրանից առաջ[7]: Այս երկու հասկացություններն էլ կիրառություն գտան Երկրորդ աշխարհամարտից հետո նացիստական հանցագործների նկատմամբ Նյուրնբերգում կազմակերպված Միջազգային տրիբունալի դատավարությունների ժամանակ: Նացիստական կուսակցության պարագլուխները դատապարտվեցին հենց պատերազմական հանցագործությունների եւ խաղաղության դեմ հանցագործությունների մեղադրանքով, սակայն քանի որ դրանք ամբողջովին չէին նկարագրում նացիստների կողմից

---

[5] **Bassiouni Ch**., Crimes Against Humanity: Historical Evolution and Contemporary Application, Cambridge University Press, 2011

[6] Convention…

[7] **Spencer Ph.,** Genocide since 1945, Routledge, 2012, p. 4

իրականացված հանցանքը, ներմուծվեց եւս մեկ հանցագործության տեսակ՝ մարդկության դեմ կատարված հանցագործություն[8]: Սակայն հատկապես կարևոր էր, որ Ցեղասպանության կոնվենցիան, ի տարբերություն պատերազմական հանցագործություններին եւ մարդկության դեմ կատարված հանցագործություններին վերաբերող նորմերի, դիտարկում է ցեղասպանության կատարման ժամանակահատվածը լայն դիապազոնում՝ նաև պատերազմական պայմաններից դուրս[9]:

Կոնվենցիան ևս մեկ «հեղափոխական» նշանակություն ունեցավ: Այն դարձավ միջազգային իրավունքի առաջին փաստաթղթերից մեկը, որոնք վերացրեցին նման հանցագործությունների դեպքում պետության սուվերենության հետ կապված խոչընդոտները:

Յուրաքանչյուր պետություն պարտավոր է ազգային օրենսդրությունում ներդնել մեխանիզմներ, որոնք նպաստելու են իր տարածքում կատարված ցեղասպանության մեղավորներին պատժելուն և ունի սեփական տարածքում ցեղասպանական գործողություններ թույլ չտալու պարտավորություն: Եթե որևէ պետության տարածքում տեղի է ունենում ցեղասպանություն, ապա անկախ պետական իշխանությունների ներգրավվածության աստիճանի, նրանց կարող է մեղադրանք առաջադրվել հանցագործությունը չկանխելու համար: Բռնություններից մարդկանց պաշտպանության հարցում Կոնվենցիան արեց հաջորդ քայլը՝ ՄԱԿ Կանոնադրությունից ու Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից հետո, լրացուցիչ պարտավորություն դնելով պետությունների վրա՝ կանխել և պատժել պետությունների սահմաններից ներս կատարված հանցագործությունը[10]:

Սակայն Կոնվենցիայի կիառումը ունեցել է նաև դժվարություններ, որոնցից առաջինը բխում է Հոդված 2–ում տրված ցեղասպանության սահմանումից. «Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված

---

[8] Действующее международное право в 2 – х томах (избранные документы). Сост. Колосов Ю.М., Кривчикова Э.С. - М. 2002. - Т. 2, с. 233.

[9] **Jones A.,** Genocide. A Comprehensive Introduction, Routledge, 2006, p.13

[10] **Straus S.,** Fundamentals of Genocide and Mass Atrocity Prevention, United States Holocaust Memorial Museum, 2016, p.3

ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ[11]»:

Կոնվենցիայի կիրառման դժվարությունները

Ակնհայտ է, որ «ցեղասպանություն» երևույթի սահմանումը պետք է ունենա այլ հանցագործություններից դրա տարանջատման հատկանիշ: Դա մարդկային այս կամ այն խումբը մասնակիորեն կամ լիովին ոչնչացնելու մտադրությունն է: Ակնհայտ է, որ տարանջատող հատկանիշի առկայությունը պարտադիր է հանցագործության որևէ տեսակ առանձնացնելու համար: Սակայն պարզ է նաև, որ օգտագործված հատկանիշը անհրաժեշտ է դարձնում ցեղասպանության մտադրությունը փաստարկված և հանգամանորեն հիմնավորող ապացույցների ներկայացում: Բնական է, որ յուրաքանչյուր հանցագործ փորձում է քողարկել արարքը, եւ այդ պայմաններում, հանցագործության մտադրությունն ապացուցելը չափազանց դժվար գործ է դառնում: Իհարկե, երբեմն ցեղասպանություն նախաձեռնողները պարզորոշ հայտարարում են թիրախային խմբի ոչնչացման նպատակադրումը: Օրինակ, 1904թ. հարավային Աֆրիկայում բնակվող հերերոների ոչնչացումը միանշանակ ձեւով հռչակվեց գերմանական գաղութային զորքերի հրամանատար գեներալ Ֆոն Թրոպայի հայտարարության մեջ:[12] Ռուանդայում 1994թ. իրականացված ցեղասպանության ժամանակ հութու զինյալները ռադիոյով հաղորդում էին զոհերի գտնվելու վայրերը և կոչ անում նրանց հայտնաբերել և ոչնչացնել, քանի որ նրանք պատկանում էին թութսի ցեղին[13]:

---

[11] Convention…

[12] **Drechsler H.,** "Let Us Die Fighting": The Struggle of the Herero and Nama Against German Imperialism (1884-1915), London, Zed, 1980, pp.156-157, ը ս տ **Goldhagen D. J.,** Worse Than War: Genocide, Eliminationism, and the Ongoing Assault on Humanity, Public Affairs, 2009, p. 33:

[13] Media and mass atrocity: the Rwanda genocide and beyond (ed. by Allan Thompson), Centre for International Governance Innovation, 2017, The Media and the Rwanda Genocide (ed. by Allan Thompson), Pluto Press, 2007, **Hatzfeld J.,** Machete Season: The Killers in Rwanda Speak, Picador, 2006, Philip Gourevitch, We Wish to Inform You That Tomorrow We Will be Killed With Our Families: Stories from Rwanda, Picador, 1999

Այնուամենայնիվ, այդ հանցագործությունը կատարողները փորձում են խուսափել հանցավոր ապացույցներ թողնելուց: Ավելին, նրանք հաճախ մեծ ջանքեր են գործադրում հանցագործություններին այլ բնույթ վերագրելու համար: Մասնավորապես, թուրքական կառավարությունը տասնյակ տարիներ պնդում է, որ 1915թ. մեկ ու կես միլիոն հայերի բնաջնջումը ցեղասպանություն չէր, այլ Առաջին համաշխարհային պատերազմի արդյունք է, որի ընթացքում տեղի են ունեցել խռովություններ, անկարգություններ եւ միգուցե քաղաքացիական պատերազմ եւ հայերի զոհերը հենց տեղի ունեցածի հետեւանք են: Նրանք շեշտադրում են գրավոր եւ տարընթերցումներից զուրկ փաստաթղթի բացակայությունը՝ հրաժարվելով ընդունել մտադրության առկայությունը:[14] Մեկ, միանշանակ փաստաթղթի բացակայությունն են շեշտադրում նաեւ Հոլոքոստը ժխտողները[15]: Ահա թե ինչու վերջին շրջանում մտադրության առկայությունը փորձ է արվում հիմնավորել ոչ թե փաստաթղթային հիմքով, այլ տեղի ունեցածի հետեւանքների վերլուծությամբ:

Կոնվենցիայի կիրառման մեկ այլ դժվարություն է զոհերի թվի խնդիրը, որը բխում է «մասամբ ոչնչացնելու մտադրություն» ձևակերպումից: Մարդկության պատմության ընթացքում եզակի դեպքեր կարելի է նշել, երբ ցեղասպանությունների հետեւանքով

---

[14] **Lewy G**., The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide, Salt Lake City: University of Utah Press, 2005, p.208, **Lewy G.,** Essays on Genocide and Humanitarian Intervention, Salt Lake City: University of Utah Press, 2012, pp.1-11, **Güçlü Y.,** Armenians and the Allies in Cilicia, 1914–1923, Salt Lake City: University of Utah Press, 2010, pp.8, 82-83, **Erickson E. J**., Ordered to Die: A History of the Ottoman Army in the First World War, Westport, CT: Greenwood, 2001, pp. 96, 161–9, **McCarthy J.**, Esat Arslan, Cemalettin Taşkıran, and Ömer Turan, The Armenian Rebellion at Van, Salt Lake City: University of Utah Press, 2006, **Katz S. T.,** The Uniqueness of the Holocaust: The Historical Dimension, Is the Holocaust unique?: perspectives on comparative genocide (ed.by Alan S. Rosenbaum), p.55-74.

[15] **Shermer M. & Grobman A..** Denying History: who Says the Holocaust Never Happened and why Do They Say It?, University of California Press, 2000, **Charny I. W.,** "The psychology of denial of known genocides," *Charny I. W., ed., Genocide: A Critical Bibliographic Review, Volume 2, London: Mansell Publishing; New York: Facts on File, 1991, pp 3–37,* **Lipstadt D.,** Denying the Holocaust: The Growing Assault on Truth and Memory, New York: Free Press, 1993, **Stern K.,** Holocaust Denial. New York: American Jewish Committee, 1993

խմբերն ոչնչացել են ամբողջությամբ: Այդպիսի օրինակներ են միջնադարում թիրախավորված ալբիգոյցիները կամ կատարները[16]: Սակայն ակհայտ է, որ միայն ամբողջական ոչնչացման դեպքերը ցեղասպանություն համարելու դեպքում փաստաթուղթը գրեթե կիմաստազրկվեր, քանի որ գլխավոր նպատակը՝ կանխարգելումը հնարավոր չէր լինի իրականացնել: Հետևաբար միանգամայն տրամաբանական էր Կոնվենցիայի քննարկման ժամանակ Նորվեգիայի պատվիրակի առաջարկը[17], ով շեշտեց, որ «ցեղասպանություն կատարելու համար չկա անհրաժեշտություն սպանել խմբի բոլոր անդամներին»:[18] Հարավսլավիայի պատվիրակությունը երկրորդեց այդ առաջարկը, նշելով, որ «ցեղասպանության հիմնական բնութագիրն ընկած է խմբի վրա հարձակում գործելու մտադրության մեջ»[19]: Դա կարեւոր նկատառում էր, հակառակ պարագայում Կոնվենցիան ուղղակի անհնար կլիներ գործարկել, քանի որ ցանկացած ցեղասպանությունից հետո էլ աշխարհի ինչ որ մասում կպահպանվեին զոհ ազգի որոշ թվով ներկայացուցիչներ, ինչը կհերքեր «ամբողջական» ոչնչացման փաստը: Մինչդեռ, ոճրագործները, ծրագրելով ցեղասպանությունը, հնարավորություն են ունենում բնաջնջել միայն թիրախային խմբի իրենց համար հասանելի հատվածը:[20] Ակնհայտ է նաև, որ մարդկային կյանքերը եւ տանջանքները չպետք է լինեն մաթեմատիկական հաշվարկի

---

[16] **Arnold J. H.,** Inquisition and Power: Catharism and the Confessing Subject in Medieval Languedoc. Philadelphia: University of Pennsylvania Press, 2001, **Kienzle B. M**., Cistercians, Heresy and Crusade (1145–1229): Preaching in the Lord's Vineyard. Woodbridge, U.K., 2001, **Boydell P. and Brewer M. G.,** The Corruption of Angels: The Great Inquisition of 1245–1246. Princeton, N.J.: Princeton University Press, 2001

[17] Norway: Amendment to Article II of the Draft Convention (E/794), U.N. Doc. No. A/C.6/228 (12 Oct 1948).

[18] Ad Hoc Committee on Genocide, Summary Records of Meetings, 21 Sept–10 Dec 1948, U.N. Doc. No.A/C.6/SR.73 (13 Oct 1948), 93 ըստ Travis H., "On the Original Understanding of the Crime of Genocide," Genocide Studies and *Prevention*, 7 (1), 2012, p. 33

[19] Նույն տեղում

[20] Prosecutor v. Krstic (Case IT-98-33-A), Judgment, 19 April 2004, para. 13. https://www.icty.org/x/cases/krstic/acjug/en/krs-aj040419e.pdf

առարկա[21]: Սակայն նաև դժվար է գտնել այն սահմանագիծը, որը թույլ է տալու զանգվածային սպանությունը ցեղասպանություն համարել: Օրինակ, թեև Սրեբրինիցա քաղաքի մոտ 8000 բոսնիացի մուսուլման տղամարդկանց եւ տղաների ջարդը[22] նախկին Հարավսլավիայի գործով միջազգային քրեական տրիբունալը որակել է ցեղասպանություն, սակայն, օրինակ, մի շարք մասնագետներ համարում են, որ դա չպետք է արվեր:[23] Քննարկումների ժամանակ նշվում էր, որ նույնիսկ մեկ մարդու սպանությունը՝ խումբը ոչնչացնելու մտադրությամբ, կարող է բնորոշվել ցեղասպանություն[24], քանի որ այդ անհատը խմբի մաս է կազմում[25]: ՈՒ. Շաբասն առաջարկում է ծայրահեղություններից խուսափելու համար «մասնակի» բառին ավելացնել «էական» կամ «զգալի» բնորոշիչները:[26] Դեռևս 1985թ. ՄԱԿ Մարդու իրավունքների պաշտպանության ենթահանձնաժողովի հանձնարարությամբ Բենջամին Ուիթակերի զեկույցում նշվում էր, որ մասնակի բառը բնութագրում է «ողջամտորեն նշանակալի թիվ՝ խմբի ընդհանուր թվի համեմատությամբ, կամ խմբի կարեւոր մասը, ինչպիսին է խմբի

[21] **Kuper L.,** Genocide. Its Political Use in the Twentieth Century, Yale University Press, 1981, p.32

[22] **Delpla I., Bougarel X., Fournel J.-L**., Investigating Srebrenica: institutions, facts, responsibilities, Berghahn Books, 2012, **Rohde D.,** Endgame: The Betrayal and Fall of Srebrenica, Europe's Worst Massacre Since World War II. Boulder: Westview, 1998

[23] **Schabas W. A**., Was Genocide Committed in Bosnia and Herzegovina? pp.45–7, Schabas, "Genocide, Crimes Against Humanity, and Darfur," pp.1703, 1715–6. **Schabas W. A.,** "Darfur and the 'Odious Scourge," *War Crimes and Human Rights,* pp.738, 752, **Malliaris S.,** Assessing the ICTY Jurisprudence in Defining the Elements of the Crime of Genocide: The Need for a 'Plan, *USAK Yearbook of International Politics and Law 3* (2010), pp.145–71, 163–5. ը ս տ **Travis H.**, On the Original Understanding of the Crime of Genocide, *Genocide Studies and Prevention*, 2012, 7 (1), p.34

[24] U.N Doc. No. A/C.6/SR.61–140 (21 Oct 1948), 158 ը ս տ **Travis H.,** On the Original Understanding of the Crime of Genocide, *Genocide Studies and Prevention* 2012, 7 (1), p. 39

[25] **Drost P.,** Genocide, Vol. I, Leyden: A.W.Sythoff, 1959, pp. 84-85, **Robinson N**., The Genocide Convention, New York, Institute of Jewish Affairs, 1960, p. 63, **Kuper L**., Genocide. Its Political Use in the Twentieth Century, Yale University Press, 1981, p. 32

[26] **Schabas W. A.,** The Law and Genocide, The Oxford Handbook of Genocide Studies (ed. by Donald Bloxham and A. Dirk Moses), New York, Oxford University Press, 2010, p. 136

ղեկավարությունը»:[27] Հարցին անդրադարձել է նաև Նախկին Հարավ-սլավիայի գործով միջազգային տրիբունալը. «Հաստատված է, որ այն դեպքում, երբ ցեղասպանության դատապարտումը հենվում է պաշտ-պանված խումբը «մասամբ» ոչնչացնելու մտադրության վրա, այդ մասը պետք է լինի այդ խմբի էական մասը»[28]: Տրիբունալը Սրեբրինիցայի բոսնիական մուսուլմանների համայնքի համար ոչնչացվածների թիվը համարել է էական և այդ փորձը համարվել է ցեղասպանություն՝ տղամարդկանց սպանությունը կարող էր համայնքը տանել դեպի ոչնչացում:[29] Ակնհայտ է, որ այս տրամաբանությունը անիմաստ է դարձնում Հայոց ցեղասպանությունը ժխտողների այն պնդումները, որոնք փորձում են վիճարկել Հայոց ցեղասպանության իրողությունը՝ կասկածի տակ դնելով հայերի մեկուկես միլիոն զոհերի թիվը[30]: Հարկ է նաև արձանագրել, որ խմբի մասնակի կամ ամբողջական ոչնչացման խնդիրը վերաբերում է ոչնչացման մտադրությանը, այլ ոչ՝ կատարված արարքին: Հետևաբար Կոնվենցիան կարող է գործադրվել ցեղասպա-նության իրականացման փորձի մեղադրանքով, եթե առկա է մտադրու-թյունը: Իհարկե, զոհերի թիվը կարող է լինել այդ մտադրության ապացույց, բայց այն բոլորովին էլ անհրաժեշտ նախապայման չէ[31]:

Նյու Յորքի Հրեական պատմական ընկերակցության՝ Լեմկինի հավաքածուում 1951թ. փետրվարի 12-ով թվագրված անտիպ թղթերից մեկում նշվում է. «Անհրաժե՞շտ է ոչնչացնել որոշակի խմբի պատկանող ամեն մի բնակչի, որպեսզի այդ գործողությունները լինեն ցեղասպանություն: Արդյոք ցեղասպանությո՞ւն է, որ Թուրքիայում ապրող 3 մլն հայերից ոչնչացվեց 1.2 մլն, ինչպե՞ս դա եղավ: Արդյոք ցեղասպանություն չէ՞ր, որ Հիտլերը սպանեց վեց միլիոնին այն 7.5 մլն

---

[27] **Whitaker B.,** Revised and Updated Report on the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide, UN Doc. E_CN.4_Sub.2_1985_6-EN, para. 29. https://digitallibrary.un.org/record/108352

[28] Prosecutor v. Krstic´ (Case IT-98–33-A), Judgment, 19 April 2004, para. 8

[29] Նույն տեղում, para. 28.

[30] **Shaw M.**, History of the Ottoman Empire and Modern Turkey, հ . 2, **Karpat K. H**., Ottoman Population 1830-1914, Demographic and Social Characteristics, Madison, The University of Wisconsin Press, 1985, pp.54, 188,
McCarthy J., Muslim and Minorities. The Population of Onoman Anatolia and the End of the Empire, New York, New York University Press, 1983, pp.112, 130

[31] **Schabas W. A**, The Law and Genocide, ..., p.136

հրեաներից, որոնք բռնազավթված Եվրոպայում գտնվում էին իր հսկողության տակ: Ցեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածը վկայում է, որ ազգային կամ կրոնական խմբի մի մասի ոչնչացումը համարվելու է ցեղասպանություն: Սակայն այդ մասը պետք է լինի էական»[32]: Հետևաբար Կոնվենցիայի համար խմբի գաղափարը առանցքային է:[33] 1946թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեյայի ընդունած բանաձեւը նշում է. «Ցեղասպանությունը ամբողջական մարդկային խմբերի գոյության իրավունքի ժխտումն է, այն դեպքում, երբ սպանությունը դա անհատ մարդկային էակների կյանքի իրավունքի ժխտումն է»:[34] Սակայն ոչ բոլոր խմբերը ներառվեցին Կոնվենցիայի մեջ: Նախագծում Լեմկինը ներառել էր ազգային, էթնիկ, ռասայական, կրոնական եւ քաղաքական խնբերը: ՄԱԿ-ում քննարկումների ժամանակ տնտեսական եւ քաղաքական խմբերը դուրս մնացին կոնվենցիայից, թեև քաղաքական խմբերի ոչնչացումը նշվել է Նյուրմբերգյան դատավարության ընթացքում՝ որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն, ինչպես նաև 1946թ. դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասսամբլեայի միաձայն ընդունած Ցեղասպանության մասին բանաձեւում:

Լեհաստանի ներկայացուցիչը պնդեց, որ որոշիչ գծերի բացակայությունը չի կարող հստակություն ապահովել եւ կարող է թուլացնել եւ ավելի անորոշ դարձնել ամբողջ Կոնվենցիան[35]: Թեև կարծիք կար, որ Կոնվենցիայում քաղաքական խմբերի բացառումը

---

[32] Թիրախային խմբի էական մասը կարող է գնահատվել քանակական (խմբի համեմատությամբ զոհերի թվով) կամ որակական չափանիշներով (խմբի ներսում զոհերի կարգավիճակով)՝ Ռ.Դաքեյան, 1915թ. հայերի դեմ իրագործված կոտորածների իրավաբանական հետևանքները և դրանց լուծման դատական ու արդարադատական հնարավոր եղանակները, Երևան, Փրինթինֆո, 2015, էջ 94

[33] Dirk Moses, Raphael Lemkin, Culture, and the Concept of Genocide, The Oxford Handbook of Genocide Studies (ed. by Donald Bloxham and A. Dirk Moses), New York, Oxford University Press, 2010, p.22-25

[34] UN General Assembly Resolution 96(I), 11 December 1946, quoted by William A. Schabas, Genocide in International Law, Cambridge, Cambridge University Press, p. 45, **Shaw M.,** Sociology and Genocide, The Oxford Handbook of Genocide Studies (ed.by Donald Bloxham and A. Dirk Moses), New York, Oxford University Press, 2010, p.160

[35] UN ESOSOC Session 7, 26 August 1948, p.712, **Kuper L.**, Genocide. ..., p.26

նպատակ ունի թույլ չտալ միջամտություն պետությունների ներքին գործերին[36], սակայն Լեմկինն էլ շատ հակված չէր քաղաքական խմբերի ներառմանը, քանի որ չէր համարում նրանց մշակույթի կրողներ, ինչպիսիք են էթնոազգային խմբերին:[37]

Ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբերի՝ Կոնվենցիայում ներառելը միանգամայն արդարացված է, քանի որ այն շեշտը դնում է մարդու ի ծնե եւ համեմատաբար հարատեւ խմբային պատկանելության վրա: Ռուանդայի ցեղասպանության ոճրագործ Ժան-Պոլ Ակաեսուի գործի քննության ժամանակ Միջազգային դատարանը որոշակի պարզաբանում է տվել այս դրույթին՝ նշելով, որ կոնվենցիայով պաշտպանված են «կայուն և մշտական» խմբերը:[38]

Հետեւաբար, հաշվի առնելով այս հանգամանքը, կարելի է արձանագրել, որ Ցեղասպանության զոհերը թիրախավորվում են ոչ թե այն պատճառով, որ պատկանում են ինչ որ խմբի, այլ այն պատճառով, որ որևէ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի ներկայացուցիչներ են ի ծնե:

Ցեղասպանական գործողություններ և պատիժ. քաղաքական գործոնի ազդեցությունը

Ցեղասպանության կոնվենցիայի Հոդված 2-ի երկրորդ մասում թվարկվում են այն կոնկրետ գործողությունները, որոնք կարող են բնութագրվել իբրեւ ցեղասպանություն. «ա) այդ խմբի անդամների սպանությունը, բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը, գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների

---

[36] **Kuper L.**, Genocide,..., pp. 24–5, 29, 31, **Stone D.,** The Historiography of Genocide, Palgrave Macmillan, 2008, p.13

[37] **Power S.,** A Problem from Hell, Basic Books, 2002, p. 71.

[38] Prosecutor v. Akayesu (Case ICTR-96–4-T), Judgment, 2 September 1998, para. 516, 701, 702. https://unictr.irmct.org/sites/unictr.org/files/case-documents/ictr-96-4/trial-judgements/en/980902.pdf

իրականացումը, ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին»[39]:

Ակնհայտ է, որ սպանությունը միայն մեկն է հնարավոր ձեւերից, որ կիրառվում է ցեղասպանություն իրականացնելու ժամանակ: Գործողություններից երեքը (ա, բ, գ) նշանակում են խմբի ոչնչացում անմիջապես կամ ժամանակային որոշակի հատվածում, իսկ մյուս երկու գործողությունը (դ, ե) ուղղված են խաթարելու խմբի հետագա գոյությունը, որի հետեւանքով խումբը ոչնչանալու է տնական ժամանակահատվածում:

Սա համապատասխանում էր Ռ.Լեմկինի պատկերացումներին, որ ցեղասպանությունը վերջին հաշվով մարդկային խմբի կյանքի համար էական հիմքերի ոչնչացումն է, ինչը բերելու է այդ խմբի անհետացմանը[40], ինքնության խաթարումն է, եւ իր էությամբ ավելի բարդ գործընթաց է, քան ուղղակի զանգվածային սպանությունը: Նա նշում է, որ Ցեղասպանությունը այս հինգ գործողությունների համակարգված նախագծի իրագործում է: Այս գործողությունները որպես մեկ ամբողջություն դիտարկելու անհրաժեշտությունը, ըստ Էլիզա ֆոն Ջոյդեն-Ֆորջիի, վկայում է նաև այն հանգամանքը, որ «ամբողջությամբ այս հանցանքները ցուցադրում են խմբի կենսական ուժը ոչնչացնելու հաստատուն մոլուցքը եւ թիրախավորում են համայնքային կյանքի ամենասրբազան կողմերը»[41]:

Կոնվենցիան ունի շատ կարևոր ևս մեկ առանձնահատկություն: 3-րդ հոդվածը սահմանում է, որ պետք է պատժվեն ոչ միայն նրանք, ովքեր ցեղասպանություն են կատարել, այլև ովքեր, «ա) մասնակցել են ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրության, բ) ուղղակի և հրապարակայնորեն հրահրել են ցեղասպանություն, գ) արել են ցեղասպանություն կատարելու փորձը, և դ) հանցակցություն ունեն ցեղասպանության կատարման մեջ»[42]:

---

[39] Convention ...

[40] **Lemkin R.,** Axis Rule ...; Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress, Washington, DC, Carnegie Endowment for International Peace, 1944, pp. 79, 78ff.

[41] Joeden-Forgey E. von, Gender and Genocide, The Oxford Handbook of Genocide Studies (ed.by Donald Bloxham and A. Dirk Moses), New York, Oxford University Press, 2010, p. 78

[42] Convention ...

Ակնհայտ է, որ Կոնվենցիայում հստակորեն ձևակերպված է ամեն ինչ՝ ցեղասպանության սահմանումից մինչև պատժելի արարքները, սակայն ցեղասպանությունները դառնում են լուսաբանման, քննարկման, ուսումնասիրման, հիշատակման եւ երբեմն՝ դատապարտման, առարկա միայն դրանց "հաջող" իրականացումից հետո: Այդպես էր ոչ միայն Հայոց ցեղասպանության կամ Հոլոքոստի դեպքում, այլ նաեւ այն ժամանակ, երբ մարդկանց ոչնչացումը տեղի էր ունենում, կարելի է ասել, բոլորի աչքերի առաջ՝ 20-րդ դարավերջին կամ 21-ի սկզբին՝ Ռուանդայում, Հարավսլավիայում, Դարֆուրում, Իրաքի եզդիաբնակ շրջաններում: Որպես վերջին օրինակ կարելի է առանձնացնել Ադրբեջանի եւ Թուրքիայի գործողությունները 2020թ. ռազմական ագրեսիայի ընթացքում: Այդ երկրների ղեկավարների հայատյաց եւ բացահայտ ռասիստական հռետորաբանությանը, որը հայերին բնաջնջելու կոչեր է անում եւ փառաբանում հայերին սպանող անձանց, այդ երկրների հասարակություններում եւ վերնախավում տիրող տրամադրությունները, ատելության խոսքը, ինչպես նաեւ իրականացված գործողությունները՝ խաղաղ բնակավայրերի ռմբահարումը, այդ թվում նաեւ արգելված զինատեսակներով, խաղաղ բնակչության եւ ռազմագերիների խոշտանգումները եւ կտտանքները, ահաբեկչական խմբավորումների ներգրավումը միանշանակորեն պետք է դիտարկվեին որպես Ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրություն, Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրում, Ցեղասպանություն կատարելու փորձ, որոնք, ըստ Կոնվենցիայի, ցեղասպանական արարքներ են և պետք է թելադրեին կանխման եւ պատժի գործողություններ[43]: Դա ևս մեկ օրինակ է, թե ինչպես միջազգային հանրության արձագանքը անգամ այդ «երբեմն» դեպքերում, վերաբերում է միայն խմբի սպանությանը, իսկ հոդված 3-ի արարքներից անտեսվում են չորս թվարկվածները: Պատճառները քաղաքական են կամ շահադիտական: Մինչդեռ թվում է,

---

[43] **Manukyan S.,** Yes, It Is Genocidal, https://www.evnreport.com/politics/yes-it-is-genocidal, Արցախում հնարավոր ցեղասպանության վտանգի մասին հայտարարություն են տարածել նաեւ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության 81 անդամները, http://genocide-museum.am/arm/23.10.2020.php

թե Կոնվենցիայի քննարկումների ժամանակ արված փոփոխություններից հետո դրանում նախատեսված հանցագործությունների դատապարտման և ոճրագործների պատժման հետ կապված խնդիրներ չպետք է առաջանային: Մասնավորապես, այդ փոփո-խությունների արդյունքում Կոնվենցիայի 4-6 հոդվածները սահմանում են, որ ցեղասպանություն կատարողը անձինք են և նրանք դա անելու համար պետք է պատժվեն «անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք»[44]:

Կոնվենցիայում սահմանված նպատակների իրագործման գլխավոր պայմաններից մեկը մեղավոր անձանց պատժելու գործուն մեխանիզմների գոյությունն է: Հոդվածներ 5-ը եւ 6-ը դրանց ապահովումը թողնում են Կոնվենցիան ստորագրած պետությունների օրենսդրությունների կարգավորմանը. «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար ընդունել իրենց սահմանադրություններին համապա-տասխան անհրաժեշտ օրենսդրություն և, մասնավորապես, սահմանել արդյունավետ պատժամիջոցներ ցեղասպանության մեջ կամ 3-րդ հոդվածում նշված մյուս արարքներից որևէ մեկում մեղավոր անձանց համար»[45]:

Առաջին դեպքը, երբ պետությունը կազմակերպել է դատավարություն ցեղասպանության մեղսակիցների նկատմամբ[46], Գերմանիայում եւ Լեհաստանում համապատասխան դատարանների գործունեությունն էր, որոնք գործեցին 1960-ականներին եւ որոնց մեծ մասը շարունակվեց մինչեւ 1980-ականները (Բելզեցի, Սոբիբորի եւ Տրեբլինկայի դատավարությունները, Խելմոյի եւ Ֆրանկֆուրտ Առուշվիցի, ինչպես նաեւ Մայդանեկի դատավարությունները): Այդ շարքում պետք է հիշատակել նաեւ Ադոլֆ Այխմանի դատավարությունը Երուսաղեմում: Իսրայելը ստորագրել էր Ցեղասպանության կոնվենցիան եւ 1950թ. երկիրը գործադրեց Ցեղասպանություն

[44] Convention ...
[45] Նույն տեղում
[46] Law Reports of Trials of War Criminals, op cit., Vol. VII, 1-10 cf Leo Kuper, Genocide. Its Political Use in the Twentieth Century, Yale University Press, 1981, pp.22-23

հանցագործության (կանխարգելման եւ պատժի) մասին օրենքը: Հետագայում Իսրայելում այլ կիրառություններ ևս եղան: Օրինակ, այս օրենքով Երուսաղեմի շրջնային դատարանի առաջ 1987թ. փետրվարին կանգնեց եւ մահվան դատապարտվեց Իվան Դեմյանյուկը, սակայն հետագայում նա արդարացվեց այն պատճառաբանությամբ, որ կա որոշ կասկած, որ նա հենց Տրեբլինկայում գործած դահիճն է, որը հայտնի է Իվան Ահեղ անունով[47]: Դատարանը համարեց, որ հնարավոր է, որ նա պահակային ծառայություն է իրականացրել Սոբիբորում եւ այլ համակենտրոնացման ճամբարներում, սակայն իր նույնականացումն Իվան Ահեղի հետ հնարավոր չէ ապացուցել:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նաև նախատեսվում է համապատասխան իրավազորություն ունեցող միջազգային դատարանի կողմից հանցագործներին դատելու և 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը լուծելու հնարավորությունը, սակայն մինչեւ Միջազգային քրեական դատարանի ստեղծումն այս դրույթը փաստորեն չի կիրառվել: Պատճառը, թերևս, ազդեցիկ պետությունների ոչ պատշաճ վերաբերմունքն էր Կոնվենցիայի նկատմամբ: Թեեւ Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1951թ. հունվարի 12-ին, երբ նվազագույն անհրաժեշտ թվով՝ 20 երկրներ վավերացրեցին, սակայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից միայն երկուսը՝ Ֆրանսիան և Չինաստանը, դարձան պայմանագրի կողմ: Խորհրդային Միությունը վավերացրեց այն միայն 1954թ., Միացյալ Թագավորությունը՝ 1970թ., Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը՝ 1983թ., իսկ ԱՄՆ-ն՝ միայն 1988թ.: Կոնվենցիայի վավերացման ձգձգումը հանգեցրեց նրան, որ տևական ժամանակ այն չէր գործում և միայն 1990-ականներին սկսեց ավելի լայն կիրառություն ստանալ միջազգային իրավունքում:

Ի պատասխան 1993թ. Խորվաթիայում և Բոսնիա և Հերցեգովինայում տեղի ունեցած զանգվածային վայրագությունների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ստեղծեց նախկին Հարավսլավիայի

---

[47] **Sharfman G.**, The quest for justice: The reaction of the Ukrainian-American community to the John Demjanjuk trials, *Journal of Genocide Research*, 200, 2, 1, 65-87

հարցով միջազգային քրեական դատարանը (ICTY): Դա առաջին միջազգային քրեական տրիբունալն էր Նյուրնբերգից հետո և առաջինն էր ընդհանրապես, որի պարտավորությունների մեջ էր մտնում քննել ցեղասպանության դեպք: Մեկ տարի անց, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հաստատեց Ռուանդայի հարցով միջազգային քրեական դատարան (ICTR) հիմնելու մասին որոշումը: Այն քննության առարկա դարձրեց 1994թ. ապրիլ-հուլիս ամիսներին Ռուանդայում իրականացված ցեղասպանությունը: Երկու տրիբունալներն էլ, չնայած ոչ միանշանակ արդյունքներին, կարեւոր պարզաբանումներ մտցրեցին Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառման վերաբերյալ, ինչպես նաեւ նոր նրբություններ և նախադեպեր ի հայտ բերեցին:

Երկու տրիբունալներն էլ պատասխանատվության ենթարկեցին բազմաթիվ անձանց, այդ թվում և բարձրաստիճան պաշտոնյաների՝ Հարավսլավիայի նախկին նախագահ Սլոբոդան Միլոշեւիչին, բոսնիական սերբերի նախագահ Ռադովան Կարաջիչին, ով 2009թ. մեղավոր ճանաչվեց Սրեբրինիցայում ցեղասպանություն, պատերազմական հանցագործություններ եւ մարդկության դեմ հանցագործություններ իրականացնելու համար, Ռուանդայի վարչապետ Ջին Կամբանդան եւ զինված ուժերի շտաբի պետ Թեոնիստ Բոգասորան, որոնք դատապարտվեցին Ռուանդայի ցեղասպանության իրականացման համար:

Հաջորդ քայլը 1998թ. Միջազգային քրեական դատարանի ստեղծումն էր Հռոմի ստատուտով: Որոշվեց հիմնել առաջին մշտական գործող միջազգային քրեական դատարանը: Հռոմի ստատուտի մշակման գործընթացը և Սուդանի նախագահի Օմար ալ-Բաշիրի՝ Դարֆուրում իրականացված ցեղասպանության համար պատասխանատվության վերաբերյալ Միջազգային քրեական դատարանի կողմից քննվող գործը լրացուցիչ պարզաբանումներ մտցրեցին միջազգային իրավունքում ցեղասպանության հանցագործության վերաբերյալ:

Այս գործիքակազմի ամբողջացման առումով կարեւոր է նաեւ ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի (ICJ) գործունեությունը, որի իրավասության մեջ է նաեւ պետությունների միջեւ գործերի քննումը, եթե դրանք վերաբերում են ցեղասպանություններին, մարդկության դեմ հանցագործություններին եւ ագրեսիվ գործողություններին: Օրինակ, 2007թ. Դատարանը Բոսնիա և Հերցեգովինայի՝

ընդդեմ Սերբիայի հայցի վերաբերյալ որոշման մեջ մատնանշել է Սերբիայի պատասխանատվությունը ցեղասպանության կանխարգելման և պատժի մասով պարտավորությունը ձախողելու առումով: Նշվում է, որ Սերբիան կարող էր միջամտել իր դաշնակիցների՝ բոսնիական սերբերի գործողություններին, մասնավորապես, 1995թ. Սրեբրինիցայի կոտորածը կանխարգելելու համար:[48]

Միջազգային քրեական դատարանի և ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի ընդունած որոշումները նպաստեցին, որ ցեղասպանության հանցագործության սահմանումը եւ որոշ խնդրահարույց հարցեր պարզաբանվեն: Սակայն դժվար է պնդել, որ նրանց արդյունավետությունը չափազանց մեծ է: Այն ակնհայտորեն իր վրա է կրում քաղաքական գործընթացների տրամաբանությունը: Այսպես, 2012թ. մարտի 14-ին դատապարտվեց Կոնգոյի Դեմոկրատական հանրապետությունում հանցագործություններ իրականացրած դաշտային հրամանատար Թոմաս Լուբունգան, սակայն օրինակ Սուդանի նախագահ Օմար ալ-Բաշիրին Դարֆուրում ցեղասպանության մեջ մեղավոր ճանաչելն անհետեւանք մնաց, եւ նա դեռ երկար շարունակում էր մնալ այդ երկրի նախագահ, քանի որ Սուդանը խզեց հարաբերությունները Միջազգային քրեական դատարանի հետ:

Նույնիսկ ընդունելով Կոնվենցիան՝ ՄԱԿ-ը չկարողացավ կանխարգելել բազմաթիվ ցեղասպանություններ եւ շատ հազվադեպ հաջողվեց ոճրագործներին պատասխաանտվության կանչել[49]: Նույնիսկ Հարավսլավիայում եւ Ռուանդայում տեղի ունեցած իրադարձություններից հետո ստեղծված միջազգային տրիբունալները լիովին չլուծեցին եղած խնդիրները, թեեւ բավականաչափ նպաստեցին իրավական շատ հարցերի պարզաբանմանը: Այս իրավիճակը բարդացնում է նաեւ այն հանգամանքը, որ ավելի քան հիսուն պետություններ, այդ թվում Ճապոնիան (որը մեղադրվում է 1937-1945թթ. Չինաստանում լայնամասշտաբ ոչնչացումներ իրականացնելու

[48] Case concerning Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, 26 February 2007, para. 438. https://www.icj-cij.org/public/files/case-related/91/091-20070226-JUD-01-00-EN.pdf

[49] **Auron Y.,** Genocide. Reflections on the Inconceivable. Theoretical Aspects in Genocide Studies, Open University of Israel, 2014, p. 31

համար) եւ Ինդոնեզիան (Արեւելյան Թիմորում իրականացված սպանությունները 1975-1998թթ.), չեն ստորագրել ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիան[50]:

Այս բացը փորձում է լրացնել 2005թ. ՄԱԿ-ում ընդունված "պաշտպանելու պարտավորության" ('responsibility to protect' (R2P)) սկզբունքը, որի համաձայն, եթե պետությունը ընդունակ չէ պաշտպանել իր քաղաքացիներին, ապա այդ պարտավորությունն անցնում է միջազգային հանրությանը, այդ թվում նաեւ այլ պետությունների, որոնք պարտավոր են գործողություններ իրականացնել, եթե առկա են զանգվածային հանցագործություններ՝ ցեղասպանություն, ռազմական հանցագործություններ, մարդկության դեմ հանցագործություններ, էթնիկ զտումներ:[51]

Կոնվենցիայի կիրառման բարելավմանն ուղղված կարևոր քայլեր կլինեին նաև այդ փաստաթղթի փոփոխությունները վերոհիշյալ հարցերի վերաբերյալ: Դա անելու ամենահարմար հնարավորությունը Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտն ընդունելու ժամանակ էր, երբ փոփոխվում էին այլ միջազգային հանցագործությունների, մարդկության դեմ հանցագործությունների եւ պատերազմական հանցագործությունների բնորոշումները[52], սակայն ցեղասպանության բնորոշման մեջ էական բարելավումներ չիրականացվեցին[53]:

Եզրակացություն

Կոնվենցիայի, ինչպես նաև դրա կիրառման դեպքերի ուսումնասիրությունը վկայում է, որ

---

[50]Նույն տեղում, p. 39

[51] 2005 World Summit Outcome, UN Doc. A/RES/60/1, para. 138.

[52] Report of the Ad Hoc Committee on the Establishment of an International Criminal Court, UN Doc. A/50/22; para. 61; UN Doc. A/AC.249/1998/CRP.8, p. 2.; **Hebel H. von and Robinson D.,** Crimes Within the Jurisdiction of the Court, *Roy S. Lee (ed.), The International Criminal Court: The Making of the Rome Statute, Issues, Negotiations, Results, The Hague/London/Boston, Kluwer Law*, 1995, 89 n 37.

[53] **Schabas W. A.,** The Law and Genocide, ..., pp.130-131

1. Կոնվենցիայի հայեցակարգն ու իրավական սահմանումները քննարկումների ընթացքում կրել են էական փոփոխություններ[54], քանի որ ՄԱԿ-ը քաղաքական կառույց է և ընդունվող փաստաթղթերն արտացոլում են ինչպես իրավական, այնպես էլ անդամ պետությունների տարաբնույթ քաղաքական մոտեցումներ[55], որոնց ճշգրտման համար պահանջվել է մոտ երկու տարի[56]: Սակայն ժամանակը շատ հարմար էր նման փաստաթղթերի ընդունման համար: Ստեղծվում էին նոր միջազգային կազմակերպություններ, իրավական գործիքակազմ, ինչպես նաեւ բացահայտվոում էին նացիստների սարսափելի հանցագործությունների մասին փաստեր: Հատկապես համակենտրոնացման ճամբարների վերաբերյալ տեղեկությունները եւ լուսանկարները ձեւավորում էին փաստաթղթերի ընդունման համար նպաստավոր պայմաններ՝ հաղթահարելու համար պետությունների սուվերենության բացարձակեցման դիրքորոշումները, որը հաճախ օգտագործվում էր իբրեւ վահան ընդդեմ միջազգային միջամտության եւ հումանիտար ներխուժումների[57]: Այդ չափազանց բարդ խնդիրը հաջողվել է լուծել Ռ. Լեմկինին՝ միայնակ, առանց թիմի՝ ունենալով նպատակ ու դրան հասնելու ծրագիր[58]:

2. Այդ փաստաթղթի կիրառման դժվարություններն ունեն երկակի՝ օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթ, ինչպես նաև իրավական ու քաղաքական բաղադրիչներ: Օբյեկտիվ դժվարությունները պայմանավորված են այլ զանգվածային ու մարդկության դեմ կատարված հանցագործություններից Ցեղասպանությունը հստակորեն առանձնացնելու նպատակով: Մասնավորապես, այդ առումով ցեղասպանության մտադրությունն ունի առանցքային նշանակություն, սակայն նաև ստեղծում է լուրջ դժվարություններ այդ մտադրության ապացուց-

---

[54] **O'Neill K. L.,** Anthropology and Genocide, *The Oxford Handbook of Genocide Studies (ed.by Donald Bloxham and Dirk Moses, New York, Oxford University Press*, 2010, p. 194

[55] **Bauer Y.,** Essay: On the Place of the Holocaust in History, *Holocaust and Genocide Studies*, 1987, **2**, 2, pp. 212-213

[56] **Kuper L.,** Genocide: Its Political Use in the Twentieth Century, Yale University Press, 1981, p.23.

[57] **Jones A.,** Genocide. A Comprehensive Introduction, Routledge, New York, 2006, p.318

[58] **Power S.,** A Problem from Hell, Basic Books, 2002, pp. 63–64, 71-72.

ման անհրաժեշտության հետ կապված: Դժվարություններ են առաջանում նաև մեկ այլ առանցքային գաղափարի՝ թիրախային խմբի մասնակի ոչնչացումը որպես ցեղասպանություն որակելու գնահատականների հետ կապված, իսկ մտավոր եւ ֆիզիկական լուրջ վնաս պատճառելու ցեղասպանական գործողությունը չափելի չէ:

Միջազգային իրավունքում համապատասխան մեխանիզմների ու կառույցների բացակայության պատճառով անգամ միջազգային ատյաններում համապատասխան գնահատականների արժանացած հանցագործությունների համար ոճրագործներին պատասխանատվության ենթարկելու խնդիրը միշտ չէ, որ լուծվում է: Իսկ մշակութային ցեղասպանության նորմի բացակայությունը անհնար է դարձնում հանցագործության կանխման կարևոր հնարավորություն-ներից մեկի օգտագործումը:

3. Թեեւ փաստաթղթի վերնագիրը, ինչպես նաեւ պետությունների՝ դրանով սահմանված պարտավորությունները պարունակում են երկու գործողություն՝ կանխարգելումն ու պատժելը, սակայն առաջինի իրականացման մեխանիզմներ կամ այդ փուլում ցեղասպանության վտանգի բացահայտման չափանիշներ Կոնվենցիայում չկան: Հետևաբար, թեև կանխարգելումն ունի չափազանց կարևոր նշանակություն, սակայն Կոնվենցիան իրական հնարավորություններ չի նախատեսում դրա իրականացման համար:

4. Կոնվենցիայի կիրառման արդյունավետությունը նվազեցնող վերոհիշյալ գործոնների լրամշակման անհրաժեշտությունն ակնհայտ է: Այդուհանդերձ, անգամ ամենապատեհ առիթների դեպքում, ինչպիսին էր, օրինակ, Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտն ընդունելու շրջանը, երբ փոփոխվում էին այլ միջազգային հանցագործությունների, մարդկության դեմ հանցագործությունների եւ պատերազմական հանցագործությունների բնորոշումները, ցեղասպանության բնորոշման մեջ էական փոփոխություններ չարվեցին: Ավելին, հինգ տասնյակից ավելի երկրներ անգամ չեն վավերացրել գործող Կոնվենցիան: Հետևաբար Կոնվենցիայի կիրառման վրա հետագայում էլ կպահպանվի քաղաքական բաղադրիչի էական ազդեցությունը:

5. Կոնվենցիայի առկայությունը կարող է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության մակար-

դակները բարձրացնելու հնարավորություն տալ երկու առումներով: Համապատասխան արդյունավետ քաղաքականության իրականացման դեպքում այդ նպատակին կարող է ծառայել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Միաժամանակ, 2020թ. ադրբեջանա-թուրքական ռազմական ագրեսիայի և դրանից հետո Ադրբեջանի զավթողական քաղաքականության հետևանքների օգտագործման ճիշտ ռազմավարության մշակման ու իրականացման դեպքում այն կարող է կարևոր դերակատարություն ունենալ նաև Արդրբեջանի և Թուրքիայի կողմից Արցախի հայերի նկատմամբ ցեղասպանության վտանգի ու Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության դեմ ոտնձգությունների կանխման տեսակետից:

Opportunities and Challenges of Implementing the "Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide"

SUREN MANUKYAN
The Armenian Genocide Museum-Institute
YSU

The aim of the article is to identify the opportunities and difficulties of implementing the "Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide". The article highlights the challenges posed by the activities of international tribunals set up in the 1990s and beyond. It particularly focuses on the Tribunals for Rwanda and Former Yugoslavia, to interpret those norms and ensure their effective application. The article also reveals the objective and subjective difficulties arising from the definitions used in the Convention. Further it considers the actions of Turkey and Azerbaijan during the 2020 Azeri-Turkish aggression against the Republic of Artsakh in the context of qualifying them as the attempt of genocide under the Convention.